ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. օգոստոսի 11-ից օգոստոսի 15-ը ք. Վարշավա (Լեհաստանի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Պանդուխտ Մարտիրոսյան - ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության օպերատիվ հետախուզության բաժնի գլխավոր մաքսային տեսուչ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Լեհաստանի Հանրապետություն, ք.Վարշավա, օգոստոսի 11-ից 15-ը

3. Հրավիրող կողմը՝

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) տնտեսական և բնապահպանական գործունեության համակարգողի գրասենյակ, ՄԱԿ թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի (UNODC) գրասենյակ, Լեհաստանի Հանրապետության ֆինասների նախարարություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր՝ ձեռք բերել գիտելիքներ հանցավոր ճանապարհով ձեռք բերված կրիպտորաժույթների, ինչպես նաև՝ կրիպորաժույթների միջոցով կատարվող տնտեսական հանցագործությունների բացահայտման նպատակով իրականացվող հետաքննության ընթացքում բլոկչեյն տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ, դրանց առանձնահատկությունների, այդ տեխնոլոգիաների միջոցով կրիպտոակտիվների հետաքննության մեթոդների և հիմնական ուղղությունների ուսումնասիրությամբ:

Մասնակիցներն անդրադարձել են բլոկչեյն տեխնոլոգիաների կիրառմամբ կրիպտորաժույթների օգտագործման եղանակներին և բլոկչեյն տեխնոլոգիաների միջոցով կատարվող հանցագործություններին:

5. Քննարկված թեմաները՝

Ս. թ. օգոստոսի 12-ից 14-ը ընկած ժամանակահատվածում կայացած "Investigation of blockchain obfuscation techniques" խորագրով դասընթացի ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները.

- Բլոկչեյն կամուրջների կիրառումը, կենտրոնացված բիթքոին միքսերների հետաքննությունը
- Tornado Cash կրիպտոմիքսերի կիրառմամբ կոնկրետ դեպքի ուսումնասիրում և վերլուծություն, կրիպտոարժույթներով կատարված բազմաշղթա գործարքներով հետաքննության մեթոդներն ու եղանակները
- «Wasabi» կրիպտոդրամապանակի կիրառությունը, դրա միջոցով Բիթքոին գործարքների իրականացումը, դրամապանակին կից CoinJoin-ի օգտագործումը, որը անանուն կրիպտոարժույթ է և թաքցնում է գործարքների հասցեները և գումարները: CoinJoin-ը օգտագործում է խելացի պայմանագրեր բազմաթիվ կողմերի միջև՝ կրիպտոարժույթները մի քանի տարբեր գործարքների մեջ խառնելու համար
- Կրիպտոարժույթների հետաքննության հիմնական գործիքների /walletexplorer, etherscan, tronescan, blockchair.com և այլն/ կիրառումը, առևտրային և հանրությանը հասանելի բլոկչեյն վերլուծական այլ գործիքների ուսումնասիրումը և օգտագործումը
- Կրիպտո-ֆինանսական հետաքննությունների անցկացումը

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Լեհաստանի Հանրապետության Վարշավա քաղաքում կազմակերպված դասընթացին մասնակցել են Հայաստանի Հանրապետությունից և Վրաստանից հրավիրված մասնակիցներ: Դաընթացի ընթացքում կրիպտոակտիվների հետաքննության եղանակների բացահայտման նպատակով բանախոսների կողմից մասնակիցներին առաջադրվել են գործնական առաջադրանքներ, որոնց կատարումն ապահովվել են դասընթացի ընթացքում ներկայացված բաց գործիքների կիրառմամբ: Դասընթացի ընթացքում մասնակիցների կողմից բանախոսներին տրվել են հարցեր, որոնք քննարկվել են ընդհանուր լսարանի մասնակցությամբ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ընթացքում որոշումներ չեն ընդունվել: Պայմանավորվածություն ձեռք բերվեց շարունակել համագործակցությունը, փորձի փոխանակումը և նոր գիտելիքների ձեռք բերումը՝ դրանք աշխատանքում կիրառելու և այն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

ՀՀ ՊԵԿ կողմից մշտապես բարձր է գնահատվել և գնահատվում միջազգային տարբեր հարթակներում գործընկեր երկրների մասնագիտական կառույցների հետ ոլորտային

քննարկումների անցկացումը և նոր գիտելիքների ձեռք բերումը, մասնավորապես՝ բլոկչեյն տեխնոլոգիաների միջոցով կատարվող հնարավոր հանցագործությունների և դրանց կիրառմամբ իրական եկամուտները թաքցնելու, մաքսանենգ ճանապարհով ապրանքներ՝ թմրանյութ, զենք զինամթերք, մշակութային արժեքներ ձեռք բերելու դեպքերի վերաբերյալ, այլ մասնակից պետությունների ձեռքբերումների և կատարած քայլերի մասին:

Միջոցառմանը մասնակցելը թույլ տվեց ՊԵԿ ներկայացուցիչին ձեռք բերել գիտելիքներ, որոնք թույլ կտան բարձրացնել աշխատանքի արդյունավետությունը բլոկչեյն տեխնոլոգիաների կիրառմամբ կատարվող տնտեսական հանցագործությունները և մաքսանենգության դեպքերը բացահայտելու գործընթացում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Պանդուխտ Մարտիրոսյան

20.08.2024թ